ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-2/17-1

ք. Երևան 06.10.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷյչԳրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 20244000 (քսան միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՊԳ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի5	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ., 13/30.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01254973
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-2/17-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1.	**Էլեկտրոնային գրատախ-տակներ կամ պարագաներ** *(Էլեկտրոնային գրատախտակ Smart board)*	**SMART** **NEC** **Equip** **Equip**	**SMART** **NEC** **Equip** **Equip**	**SMART Board SBM680** **NEC UM301X** **Equip** USB 2.0 active extension cable, 5 m **Equip RGB Connec-tion cable, 15P D-Sub** M./M.,10	**SMART Technologie s ULS** (Կանադա) **NEC Display Solutions** LTD (Ճապոնիա) ***DDC GmbH*** *(Գերմանիա)* ***DDC GmbH*** (Գերմանիա)	**SMART Board SBM680** Ինտերակտիվ (Էլեկտրոնային) գրատախտակ **երկու հոգու միաժամանակյա աշխատանքի** հնարավորությամբ և **NEC UM301X** գերկարճ արտացոլման թվային պրոյեկտոր անհրաժեշտ **մալուխներով՝** լրակազմով / **Dual User** Interactive Whiteboard (IWB) **SMART Board SBM680** with **NEC UM301X** Ultra Short-Throw projector and **cables** (set): **Մեկ լրակազմն իր մեջ ներառում է՝** **Ա)** Ինտերակտիվ (Էլեկտրոնային) գրատախտակ **երկու հոգու միաժամանակյա աշխատանքի հնարավորությամբ Smart Board SBM680/ Dual User** Interactive Whiteboard **Smart Board SBM680՝** 1 հատ; - Ակտիվ մակերեսը W x H (156.5 cm x 117.5 cm); - Անկյունագիծը - 77" (195.6 cm); - 4:3 Aspect Ratio; - Թվայնացման տեխնոլոգիա/ Digitizing Technology - **Four-camera DViT™** (Digital Vistion Touch) technology; - Առանց հատուկ գրչի աշխատանքի հնարավորություն; - Մարդու մատն և այլ գրչատիպ առարկաներն որպես գրիչ կամ մկնիկ օգտագործելու հնարավորություն; - Գրիչներն – ոչ էլեկտրոնային, կարող են փոխարինվել ցանկացած գրչատիպ առարկաներով; - Բազմալեզու ծրագրային ապահովում SMART Notebook Multilanguage software (50 languages incl. English and Russian). - Մալուխ- USB 2.0 active extension cable (3 m); Քաշը – 18.5 kg; Երաշխիք / **Warranty**:՝ **12** (տասներկու) ամիս: **Բ)** Գերկարճ արտացոլման թվային պրոյեկտոր **NEC UM301X / Ultra-Short Throw Digital Projector NEC UM301X՝** 1 հատ; **Հատուկ հնարավորություններ/ Special Features :** - **USB Display** (incl. Audio) ֆունկցիա – համակարգչի էկրանի պատկերի ցուցադրում USB-մալուխի միջոցով առանց VGA մալուխ միացնելու/ USB Display – computer's screen image can be projected via a USB cable without connecting a VGA cable; - **USB Viewer** առանց **համակարգչի շնորհանդես անցկացնելու համար**/USB Viewer for JPEG - allows files to be displayed directly from a USB stick; - **Ինֆորմացիայի փոխանցում համակարգչային ցանցի միջոցով** / Content Transmission via Network; - **Հատուկ ծրագրային ապահովում NaViSet Administrator 2** բազմաքանակ պրոյեկտորների ղեկավարման համար համակարգչային ցանցի միջոցով/ NaViSet Administrator 2 software to manage all your connected display devices from a centralized location; -**DICOM** տեխնոլոգիա / **DICOM** Simulation - a standardized display function for gray scale images based on human sensitivity to contrast - **Լրացուցիչ WLAN** / Optional WLAN և **PJ LINK** ստանդարտ;

		LANBERG	**LANBERG**	m **LANBERG** HDMI Connection cable, 10 m	**Impakt S.A.** (Լեհաստան)	- **Հեռակառավարում և հսկում՝ LAN-ի և RS-232-ի միջոցով** / Remote control and administration via LAN and RS232; - **Պատի գույնի կոմպենսացում և գույնի կառավարում** (6 առանցքային գույնի կառավարում) / Wall Color Correction & Color Management (6 Axis Color Control); - **Պատկերի կարգավորում** / Picture Adjust, **Շնորհանդես և մկնիկի հսկում**/Presentation and Mouse Control; - **Վիրտուալ հեռակառավարում** համակարգչով անմիջական հսկման համար /Virtual Remote for direct PC control - the various projector settings can be managed not only using the remote control unit, but also from a PC connected to it via the VGA cable.; - **Ավտոմատ էկոնոմ ռեժիմի միացում** / Auto Eco Mode – energy-saving option enables the projector brightness to be lowered in order to prolong the service life of the lamp and to cut power consumption; - **Ավտոմատ միացում** և **անջատում** / Auto Power ON/OFF, Արագ միացում / արագ անջատում / Quick On/Off; Direct Power-Off Function & Off-Timer , ECO scheduler; - **75% էկրանի մթացում** և **խոշորացման հնարավորություն** / 75 % AV mute function & Magnify function; - **Բարձր լեռնային գոտում աշխատելու ռեժիմ** / High Altitude Mode; - **Օգտվողի լոգոտիպի օպցիոնալ արտացոլում**/Optional User Logo and Test Pattern; - Պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա՝3 x 0.63" **LCD** TFT Panel with Micro Lens Array (MLA); - **Պայծառությունը՝ / Brightness - 3,000 Lumens**(approx. 75% in Normal, 60% in Eco Mode); - **Կետայնությունը՝ իսկական** (ֆիզիկական)՝ Native **XGA** (1,024 x 768 pixels / total 786,432 pixels) / **արհեստական** (ինտերպոլացված)՝ compressed **WUXGA** (1,920 x 1,200 pixels/ total 2,304,000 pixels)) resolution; - Կողմերի հարաբերակցություն **4:3,** (իսկական) **/16:9, 16:10, 5:4** (արհեստական)/Aspect Ratio (Native / Supported) - **4:3/ 16 :9, 16:10, 5:4;** - Լամպի շահագործման ժամկետը՝ **4,000 /5,000 / 8,000** ժամ (Պայծառ/Ստանդարտ/Էկոնոմ ռեժիմներում) / **Lamp life - 4,000 /5,000 / 8,000** hours (Bright/Normal / Eco mode); - Կոնտրաստը՝ / **Contrast - 6,000 : 1;** - Մեխանիկական ֆոկուս / ֆիքսված օպտիկական խոշորացում/ **Manual** Focus / **Fixed** Optical Zoom; - **Պատկերի չափը՝** / Screen size (diagonal, min/max) – **156.2cm** (61.5") - **296.2cm** (116"); - **Պրոեկցիոն հեռավորություն** / Projection Distance - **0.1 – 0.51 m;** - **Բացվածքի հարաբերակցություն / Throw Ratio - 0.36 : 1;** - **Թվային խոշորացում** / Digital Zoom – **1.4x;** - **Ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում**/ Manual Keystone correction - **V =˜10% / H=˜10%;** - Մուտքային տերմինալներ /Inputterminals:**1** x Mini D-sub 15 pin (VGA - Component shared); **1** x **HDMI** (Deep Color, Lip sync); **1** x **HDMI** with MHL support; Composite: 1 x RCA; 1 x 3.5 mm Stereo Mini Jack; 2 x RCA Stereo; **Microphone** Input: 1 x 3.5 mm Stereo Mini Jack (Dynamic mic); - Ելքային տերմինալներ՝ /**Output** terminals: **1** x

						Mini D-sub 15 pin; 1 x 3.5 mm Stereo Mini Jack (variable); - Հաղորդակցման տերմինալներ՝ / **Communication** terminals: 2 x Type A (USB 2.0 high speed); 1 x USB Type B; 1 x RS – 232; 1x RJ-45; WLAN (optional) - **Բարձրախոսներ** / Speakers - 1 x **20W** (mono); - **Պատի կախոցը ներառված է** / Wall Mount included; - Բազմալեզու (29 լեզու) մենյու և գաղտնաբառով անվտանգության համակարգ / OSD with 29 languages & Password Security System; Քաշը – 5.5 kg; - Երաշխիք / **Warranty:** - Թվային պրոյեկտորի համար՝ **36** (երեսունվեց) **ամիս,** իսկ պրոյեկտորի **ներկառուցված պրոյեկցիոն լամպի** համար՝ **6** (վեց) **ամիս** կամ **1,000 ժամ**, կախված այն բանից, թե **որ իրադարձությունը տեղի կունենա առաջինը:** **Գ) Մալուխներ՝** - **Equip USB 2.0** ***ակտիվ*** երկարացման մալուխ 5մ.՝ 1 հատ, - **Equip RGB Connection cable, 15P D-Sub** M./M., 10 մ.՝1 հատ - **LANBERG HDMI** միացման մալուխ M./M., 10 մ.՝ 1 հատ, Երաշխիք / **Warranty: 12** (տասներկու) **ամիս.**

Ծանոթություն՝

Հատկանիշների ընութագրերում կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեք» բառերը:

Ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց: Որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:

Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Մատակարարումը տեղադրումը, միացումը, փորձարկումն ու պատվիրատուի անձնակազմի ուսուցումը իրականացվում է մատակարարի կողմից՝ պայմանագրի գնի շրջանակներում հետևյալ վայրերում՝

- Ք. Արմավիրում տեղակայված զորամասում - 5 հատ, ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում - 1 հատ, Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան - 1 հատ, ավան Բաղրամյանում տեղակայված զորավարժադաշտում - 1 հատ, ք. Գորիսում տեղակայված զորամասում - 1 հատ, գ. Կարճաղբյուրում տեղակայված զորամասում - 1 հատ, ք. Վանաձորում տեղակայված զորամասում - 1 հատ, ք. Եղեգնաձորում տեղակայված զորամասում - 1 հատ, ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն համայնքում տեղակայված զորամասում - 1 հատ, ք. Երևան Բագրևանդ 5 հասցեյում տեղակայված զորամասում - 1 հատ:

Սույն հավելվածին կից ներկայացվում են առաջարկվող **NEC UM301X** գերկարճ արտացոլման պրոյեկտորի *արտադրող կազմակերպության՝* **NEC Display Solutions LTD** ընկերության **ISO 9001** որակի սերտիֆիկատն և **Celestica S.R.L.** (Ռումինիա) ընկերության **ISO 9001** որակի սերտիֆիկատն, որի գործարանում էլ **SMART Technologies ULS** ընկերության պատվերով արտադրվում են **SMART Board SBM680** ինտերակտիվ գրատախտակները (***SMART Technologies*** *ընկերությունը, ինչպես և բազմաթիվ այլ արտադրողներ, հատկապես հյուսիս-ամերիկյան ընկերությունները (օրինակ՝* ***Apple Inc.,*** *որը գործարաններ չունի և* ***iPhone*** *հեռախոսներն արտադրում է* ***Foxconn*** *(Չինաստան) ընկերության գործարանում) ներկայումս հիմնականում նախագծում է տարբեր տեսակի սարքավորումներ, իսկ նրանց արտադրությունն իրականացնում է արտասահմանում՝ ապրանքի գինը նվազեցնելու նպատակով*):

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
1.	**Էլեկտրոնային գրատախտակներ կամ պարագաներ** (Էլեկտրոնային գրատախտակ Smart board)	հատ	14	1446000	20244000	14

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-2/17-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
Հ/հ	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
1	Էլեկտրոնային գրատախտակ (Smart board)	30195200/2	20244000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-2/17-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-2/17-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն